«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 225.1-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկան որոշվում է այդ առարկայի նույնացման համար բավարար ընդհանուր նկարագրությամբ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Գրավը կարող է տարածվել գրավատուի ողջ շարժական գույքի, շարժական գույքի մասերի, անբաժանելի շարժական գույքի և շարժական գույքի ընդհանուր տեսակների վրա:»:

Հոդված 3. Օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գրավի իրավունքը տարածվում է գրավ դրված գույքի օգտագործման արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների վրա, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: